ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 28-ին, հինգշաբթի, Զատկվա արձակուրդների առթիվ, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը միօրյա պտույտ կատարեց, այցելելով Ս. Գեղարդի վանքը, Գառնիի ավերակները և Եղիշե Չարենցի անվան հուշարձանը։

***

Ապրիլի 29-ին, ուրբաթ, ժամը 2-ին, Մայր Աթոռ այցելեց Հնդկաստանի քաղաքական և հասարակական գործիչ պրոֆ. Զատերջին, ընկերակցությամբ Արտասահմանի հեռ մշակութային կապի հայկական ընկերության նախագահ տիկին Բերսաբե Գրիգորյանի։ Հարգելի հյուրը, այցելելուց հետո Մայր Տաճար և եկեղեցական արվեստի թանգարան, ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից։ Հայոց Հայրապետի և հարգելի պրոֆեսորի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որին ներկա էր նաև գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը։ Ժամը 3-ին, ի պատիվ հարգելի հյուրի, տրվեց ճաշկերույթ։ Պրոֆեսորը հրաժեշտ առավ Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից լավագույն տպավորություններով։

***

Մայիսի 1-ին, «Կարմիր կիրակէ», Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը՝ «Ով անմիտք և հեղգասիրտք ի հաւատալն ամենայնի որ խօսեցան մարգարէքն» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 8-ին, կիրակի, «Տօն երեման Ս. Խաչի», Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը՝ «Վեր առեալ ցնծայ երկինք և երկիրս ուրախանայ ընդ յայտնիլ սրբոյ խաչին սեռակնաձև քառաթևին, որ զաշխարհս լուսաւորեաց արեգակնակերպ ճառագայթիւք» շարականի բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 15-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաբարյանը՝ «Զէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 19-ին, հինգշաբթի, «Համբարձումն Քրիստոսի»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Նշան քահանա Բեյլերյանը՝ «Եւ ամբարձեալ զձեռսն իւր օրհնեաց զնոսա... և վերանայր յերկինս» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, ի հիշատակ Հայրապետական Աթոռի Սսից Ս. Էջմիածին փոխադրության տարեդարձի, կատարվեց հայրապետական մաղթանք։

Օրվա հանդիսությանց ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 22-ին, կիրակի, «Երկրորդ Մաղկազարդ»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը՝ «Քում ամենազոր գալստեանդ, Քրիստոս Աստուած մեր, երկիրպագանեն զօրք հրեշտակաց» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 23-ին, երկուշաբթի, Հոգևոր Ճեմարանում սկսվեցին ամավերջի գրավոր ու բանավոր քննությունները, որոնք տևեցին մինչև հունիսի 4-ը, շաբաթ։